ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1072 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 20 ԵՎ 37/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 65-րդ հոդվածի 6-րդ մասով, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ քաղաքի Ս. Շահումյան փողոց 20 և 37/1 հասցեներում կառուցապատման ներդրումային ծրագրին (այսուհետ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արարատ քաղաքի Ս. Շահումյան փողոց 20 հասցեում գտնվող, 4,808,414.16 դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 0.25608 հա հողամասը (առկա է քանդման ենթակա 1231.3 քառ. մ մակերեսով ինքնակամ անավարտ շինություն, կադաստրային ծածկագիր՝ 03-002-0016-0092) և Արարատ քաղաքի Ս. Շահումյան

փողոց 37/1 հասցեում գտնվող՝ 2,020,780.74 դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 0.10762 հա հողամասը (առկա է քանդման ենթակա 451.11 քառ. մ մակերեսով ինքնակամ անավարտ շինություն, կադաստրային ծածկագիր՝ 03-002-0015-0147, այսուհետ միասին՝ գույք) ընկերությանը անհատույց սեփականության իրավունքով՝ նվիրաբերությամբ, տրամադրելուն՝ սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած ծրագրի իրականացման նպատակով:

3. Սահմանել ծրագրի իրականացման նպատակով գույքի նվիրաբերության գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սահմանել, որ ծրագրի իրականացման մեկնարկ է համարվում սույն որոշման 5-րդ կետում նշված պայմանագրերի կնքման պահը:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավարին՝

1) Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գույքը ծրագրի իրականացման նպատակով ընկերությանը տրամադրել նվիրաբերության կարգով և ընկերության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր.

2) նվիրաբերության պայմանագրում նախատեսել դրույթ, համաձայն որի՝ սույն որոշման 3-րդ կետով սահմանված 2-րդ հավելվածի պայմանները չկատարելու դեպքում սույն որոշմամբ նվիրաբերությամբ տրամադրված գույքը սեփականության իրավունքով և համայնքի կողմից առանց փոխհատուցման անցնում է համայնքին.

3) սույն որոշումն ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել ծրագրի իրականացման արդյունքում համայնքին փոխանցվելիք 48 (քառասունութ) բնակարանների շահառուների կամ նրանց իրավահաջորդների ցանկը՝ հիմք ընդունելով նախկինում նրանց հետ կնքված պայմանագրերը:

6. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասերը ծրագրի մեկնարկից հետո 5 (հինգ) տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու և չկառուցապատվելու դեպքում սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած

ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, իսկ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավարին առաջարկել լուծել ընկերության հետ կնքված նվիրաբերության պայմանագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

23.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ